

– Տիկին, նախանձը գթե՛զ կը կուրցնէ,– կ'ըսէր,– դու գիտես թէ առանց քու հրամանիդ սա սենեակէն դուրս ելած չունիմ. ես ինչպե՞ս, ե՞րբ կրնայի այդ աղջիկը փախցնել:

Իսկ սա՛

– Թո՛ղ տուր ձեռքս,– կը գոչէր կատաղութեամբ եւ աչքերն արիւնով լցուած՝ ամէն ուժը կը թափէր ձեռքը կուղէր աղատել:

Այս միջոցիս յանկարծ կանանոցին դուռը կը ռնկի վրայ պառկեցաւ շառաչմամբ, եւ Գուրգէնի որոտալից ձայնը լսուեցաւ, որ «մահ դիմադրողին» կը պոռար. զինեալ պահապանները ծակէ ծակ փախան, եւ սա երկու քայլ փոխելով լուսաւոր սենեակը մտաւ ուր կատաղի կինը աչքերը դարձած՝ ոչ բան կը տեսներ եւ ոչ խօսք կը լսէր:

Աղախիկները այս ահագին սպառազէն մարդը, որ մերկ սուրը ձեռքը երբ տեսան, վայերու ձայներ եւ ճիչեր ձգելով փախչող փախչողի եղան. իսկ Գուրգէն երբ տեսաւ կատաղի կինը, որուն ձեռքը դաշոյնը կը փայլէր եւ «թո՛ղ տուր» կը գոչէր, եւ երիտասարդը, որ ամուր ձեռքը թող չէր տալ, բոլոր բարկութիւնը կորսնցուց եւ մեծածայն ծիծաղով քրքիջ արձակեց այս կատակերգակ տեսարանին վրայ:

Այդ ահագին ծիծաղը եւ ձեռքին ուժաթափութիւնը պարտաւորեցին կինը, որ դաշոյնը ձեռքէն նետեց, եւ երբ դարձաւ սպառազէն հսկայն տեսաւ, որուն ետեւը չորս-հինգ նոյնպէս սպառազէն թիկնապահք կանգնած էին, շուտ մը քօղը գլուխը քաշեց եւ իր բազմոցին վրայ սմբեցաւ:

Իսկ Գուրգէն միշտ ծիծաղելով ծռեցաւ, առաւ գետնէն դաշոյնը եւ լաւ մը զննելէն վերջ.

– Ի՛նչ գեղեցիկ խաղալիք, պէտք չէ Տիկինը այսպիսի զարդէ մը զրկել,– ըսաւ եւ բերաւ կնոջը քով դրաւ. իսկ նա բարկութեամբ առաւ քովի բարձին տակ ծածկեց: